ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ
(Քրիստոս և Պրոմեթևս)

Քրիստոնեությունը ոչ միայն անտիկ մշակույթի ժխտումն էր, այլև շարունակությունը: Եվ առնվազն եվրոպական (եվրասիական) մշակույթի զարգացման տրամաբանությունը հասկանալ անհնար է առանց այս իրողությունը վերլուծելու: Քրիստոնեական և անտիկ մշակույթների միջև ամենաբազմազան հարաբերություններ և առնչություններ կան. դրանց հայտնաբերումը մշակութաբանական կարևոր խնդիր է:

Պրոմեթևսի և Քրիստոսի կերպարների համեմատությունն իմաստ ունի այս կոնտեքստում: Սրանցից ամեն մեկը իրեն ստեղծող մշակույթի ամենահարազատ ու բնորոշ խորհրդանիշներից մեկն է: Ամենատարբեր միջավայրերում ստեղծված՝ այդ երկու կերպարները պատմության բերումով դրվել են մի շարքի մեջ՝ իբրև եվրոպական մշակույթի զարգացման տարբեր փուլերի դրսևորումներ: Անտիկ մշակույթը, որը ծնեց Պրոմեթևսին, եվրոպական մշակույթի սկիզբն էր: Քրիստոնեությունը, արևելքից գալով, հետո արևելյան և արևմտյան թևերի բաժանվելով, դարձավ եվրոպական մտածողության ամենահարազատ դրսևորումներից մեկը:

Պրոմեթևսը և Քրիստոսը իրենց զոհաբերում են հանուն մարդկանց: Ահա՛այն գլխավոր կետը, որ մոտեցնում է այս հերոսներին: Նրանցից ամեն մեկը միայն իրեն հատուկ տեղն է գրավում իր միջավայրում, այդ միջավայրի կրոնական և մշակութային պատկերացումների մեջ: Քրիստոսը եռադեմ Աստծու դեմքերից մեկն է, քրիստոնեության որդի-Աստվածը, որի անունը բնորոշում է ամբողջ ուսմունքը: Այսինքն՝ նա քրիստոնեության համակարգում անհամեմատ բարձր է կանգնած, քան Պրոմեթևսը անտիկ հեթանոսության համակարգում: Պրոմեթևսը հին հունական բազմաթիվ աստվածներից մեկն է: Բայց ամենաէականը նրանց այն վճռական քայլն է, որը երկուսին էլ հավերժացրել է մարդկային գիտակցության մեջ: Այստեղ էլ նրանք իրարից շատ տարբեր են. Պրոմեթևսը Զևսից խլում է կրակը մարդկանց տալու համար իր սեփական ցանկությամբ և իբրև ընդդիմություն Զևսին, որի համար էլ Զևսը նրան դաժանորեն պատժում է: Քրիստոսը անմռունչ ընդունում է իրեն վիճակված տառապանքը, մարդկային դատարանի անարդար վճիռը: Այս տարբերություններին դեռ կանդրադառնանք:

Բայց հիմա շատ կարևոր է ասել, որ այս բոլոր տարբերություններով հանդերձ, երկու հերոս (այս բնորոշումը, մանավանդ Քրիստոսի առնչությամբ, պայմանական է) կամ բարձրագույն ոլորտների հետ կապված երկու էակ գնում են գիտակցված ծանրագույն տառապանքների հանուն մարդկանց, այսինքն՝ կատարում են անձնազոհության մեծագույն արարքը: Գոնե եվրոպական մշակույթի մեջ այս երկուսը ահա այս իմաստով միանգամայն առանձնահատուկ տեղ են գրավում:

Մարքսը միանգամայն իրավացիորեն Պրոմեթևսին համարում էր մարդկության ամենաազնվական հերոսներից մեկը: Քրիստոնեության նկատմամբ մարքսիզմի ունեցած վերաբերմունքը նրան ոչ մի կերպ չէր թույլ տա նման բան ասել Քրիստոսի մասին: Բայց, մշակութաբանական աննախապաշար հայացքով նայելիս Քրիստոսի արարքը նրան նույնքան իրավունք է տալիս, անկախ քրիստոնեական աշխարհընկալման համակարգում իր գրաված դիրքից, համարվելու առհասարակ մարդկային մտածողության ստեղծած ամենաբարձր խորհրդանիշներից մեկը: Ահա սա է ստիպում կողք կողքի տեսնելու այս երկու հերոսներին և մտածելու նրանց արարքների իմաստի ու առանձնահատկությունների մասին:

Հետագա շարադրանքի համար անհրաժեշտ է մի վերապահում անել՝ Պրոմեթևսը և Քրիստոսը ներկա դեպքում վերցվում են իսկապես իբրև գրական հերոսներ՝ մի կողմ թողնելով կրոնադավանաբանական բոլոր խնդիրները: Այս մոտեցման դեպքում Նոր Կտակարանը և հին հունական ողբերգությունները կարող են դիտվել իբրև հավասար գրական ստեղծագործություններ, որոնցում ստեղծված են երկու խորհրդանշական հերոսների կերպարներ:

Պրոմեթևսը հպարտ ու ըմբոստ հերոսի մարմնացումն է դեռ անտիկ ժամանակներից, այս գիծն է, որ նրան ապահովել է բոլոր ժամանակների հեղափոխականների հիացմունքը: Էսքիլեսի ողբերգությունը այդպիսին է նրան պահպանել սերունդների հիշողության մեջ: Հիշենք՝ Պրոմեթևսը աստվածներից խլել է կրակը և տվել մարդկանց: Դրա համար Զևսը զայրացել է և ահավոր պատիժ մտածել նրա համար. Պրոմեթևսը գամված է ժայռին, և ամեն օր Զևսի արծիվը կտցում է նրա լյարդը՝ սարսափելի տառապանքներ պատճառելով նրան: Բայց Պրոմեթևսը չի զղջում. բոլորը նրան կոչ են անում ավելի զգույշ լինել գոնե խոսքերի մեջ, բայց նա պահպանում է իր ըմբոստ կեցվածքը: Իր այս առանձնահատկությամբ Պրոմեթևսը իսկական անտիկյան հերոս է, այն հերոսներից, որոնք գիտեին իրենց ճակատագիրը, բայց չէին երկնչում դրանից, հոգով չէին թուլանում: Ընդհակառակը, այդ իմացությունը նրանց դարձնում էր ավելի անվախ ու վճռական: Ի վերջո, նրանք ոչինչ չէին կարող փոխել իրենց ճակատագրում, նրանց մնում էր արժանապատվորեն տանել այդ ճակատագիրը, դրա գծած սահմաններում կատարել իրենց սխրագործությունները առանց կասկածանքների ու վախի, չխեղճանալ աստվածների առջև: Այդպիսի հերոսի գրական բարձրագույն մարմնավորումներից մեկը, իհարկե, Աքիլլեսն է: Բայց Պրոմեթևսի կերպարը հին հունական դիցաբանության ու գրական բոլոր կերպարների մեջ առանձնանում է անձնազոհության այն ուժեղ լիցքով, որ շեշտվում է Էսքիլեսի ողբերգության մեջ: Անձնազոհության այս արարքով Պրոմեթևսը հաստատում է իրեն, հերոսի իր իրավունքները և ընդառաջ է գնում իր ճակատագրին, և այս չափով, մի անգամ ևս ասենք, նա իսկական անտիկյան հերոս է: Եվ հետագայի հեղինակները նրան այդպես էլ ընկալել են: Ամենաբնորոշ գործերից մեկը՝ նոր ժամանակներում Պրոմեթևսին նվիրված, Գյոթեի հայտնի բանաստեղծությունն է: Դժվար չէ տեսնել այն թելերը, որոնք 18-րդ դարի հեղինակին կապում են նրանից ավելի քան երկու հազարամյակ առաջ ապրած հույն ողբերգակի հետ:

Քրիստոսին Պրոմեթևսի հետ կապում է միայն ու միայն անձնազոհության արարքը: Մնացած ամեն ինչ տարբեր է և տարբեր է սկզբունքորեն, այնքան տարբեր, ինչքան կարող են տարբեր լինել երկու տարբեր աշխարհներ, մշակույթներ, կրոնական համակարգեր: Պրոմեթևսն ըմբոստ է, Քրիստոսը՝ խոնարհ: Պրոմեթևսն ըմբոստանում է գլխավոր աստծու դեմ, Քրիստոսն ինքն Աստված է, մասն այն եռադեմ աստծու, որն ստեղծել է այս անկատար աշխարհը: Այս կետն ավելի լուրջ ուշադրություն է պահանջում:

Մարդկանց օգնելու համար Քրիստոսն իջնում է երկիր, մարդանում է և իրեն դատապարտում մարդկային ամենաասարսափելի տառապանքներին: Պրոմեթևսը տառապում է իբրև աստված՝ միշտ բարձր մնալով մարդկանցից: Նա անմահներից է, և ոչ մի բան ի վիճակի չէ փոխել այս իրողությունը: Երկուսն էլ սիրում են մարդկանց: Այս կետը հետաքրքրական է: Էսքիլեսի հերոսը խոսում է իր սիրո մասին, բայց, անշուշտ, այդ վերաբերմունքը տարբեր է քրիստոնեական սիրո այն ըմբռնումից, որ բերեց Քրիստոսը: Չենց այս ըմբռնումն է, որ, ինձ թվում է, ազդել է նաև Գյոթեի Պրոմեթևսի վրա. ահա ինչպես է խոսում նա մարդկանց մասին Զևսին նետած իր զայրացած խոսքում.

Мне - чтить тебя? За что?
Рассеял ты когда-нибудь печаль
Скорбящего?
Отер ли ты когда-нибудь слезу
В глазах страдальца?

Բայց վշտացածի տխրությունը ցրելը և տառապողի արցունքը սրբելը Պրոմեթևսի իսկական առաքելությունը չէր. դա պիտի ձգտեր անել Քրիստոսը...

Պրոմեթևսի արարքը իսկապես հերոսական է (ոչ միայն այս բառի առօրյա, այլև դիցաբանական իմաստով): Բայց դա պարզ, հստակ սկզբով ու վերջով արարք է կամ արարքների շարք: Նպատակը բարձր է ու հասկանալի՝ ազատել մարդկանց բնության գերությունից, նրանց զենք տալ ապրելու, լավացնելու իրենց կյանքը: Դրա համար արժեր գժտվել Զևսի հետ, իրեն դատապարտել հավիտենական տառապանքների:

Քրիստոսի դեպքում ամեն ինչ այլ է. որևէ կոնկրետ նպատակ չկա, արարքի հստակ ուրվագծերը չկան: Եվ ամենաէական տարբերություններից մեկը Պրոմեթևսի հետ համեմատած՝ Պրոմեթևսին մարդիկ շնորհակալ են, այնինչ Քրիստոսին մարդիկ իրենք են դատապարտում ամենաասարսափելի մահապատիժներից մեկին: Երկուսն էլ տառապանքների և մահվան են գնում հանուն մարդկանց, բայց այսքան տարբեր ճանապարհներով: Օգնության բնույթն ու բովանդակությունը ևս խորապես տարբեր են: Եթե Պրոմեթևսի օգնությունը մարդկանց նյութական է ու շոշափելի (կրակ և քաղաքակրթության այլ շնորհներ, որ հին ժամանակների կուլտուրական հերոսները տալիս էին մարդկանց), ապա Քրիստոսի օգնությունը գործ ունի միայն ու միայն հոգու և բարոյականության հետ: Չիշենք գրական երկու հուշարձան, որոնցից ամեն մեկը բնութագրում է հերոսներից յուրաքանչյուրի սխրագործությունը: Էսքիլեսի «Շղթայված Պրոմեթևսը» ողբերգության մեջ Պրոմեթևսն ինքը այսպես է ներկայացնում իր արածը.

...Ум и сметливость
Я в них, дотоле глупых, посеял...
...Теням снов
Подобны были люди, весь свой долгий век
Ни в чем не смысля. Солнечных не строили
Домов из камня, не умели плотничать,
А в подземельях, муравьями юркими,
Они без света жили, в глубине пещер.
Примет не знали верных, что зима идет,
Или весна с цветами, иль обильное
Плодами лето, - разуменья не было
У них ни в чем, покуда я восходы звезд
И скрытый путь закатов не поведал им.
Премудрость чисел, из наук главнейшую,
Я для людей измыслил и сложенье букв,
Мать всех искусств, основу всякой памяти.
Я первый, кто животных приучил к ярму,
И к хомуту, и к вьюку, чтоб избавили
Они людей от самой изнурительной
Работы...

Այս թվարկումը երկար է շարունակվում, հիշվում են մարդու բոլոր գլխավոր հմտությունները, որոնք նրան թույլ են տվել հարմարվելու աշխարհին, բնությանը: Քրիստոսի արարքները այսպես թվարկել հնարավոր չէ, թվարկելու բան չկա:

Հիմա հիշենք նոր ժամանակների մի գործ՝ Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունը՝ «Քրիստոսն անապատում», որը Քրիստոսի էության լավագույն մեկնաբանություններից է.

Նրա ճակատը մութն էր ավելի,
Քան անապատը գիշերվա մթնում,
Մտածում էր նա՝ սեր-լույս ծավալի
Մարդկային կյանքի մութն անապատում:

«Սեր-լույս ծավալել մարդկային կյանքի մութն անապատում» – շատ տարբեր է սա կրակը աստվածներից խլելուց կամ այն բոլոր հմտությունները մարդկանց տալուց, որոնք հիշում է հին հունական հերոսը: Այս վերջինը, ինչքան էլ դժվար, ինչքան էլ խիզախություն պահանջող՝ ուժերի հզոր լարմամբ ինչ-որ պահի ավարտվում է: Այնինչ Քրիստոսի խնդիրը ծայր ու սահման չունի: Թումանյանի բանաստեղծության ավարտական տողերը ակնարկում են Քրիստոսի խնդրի անվերջ դժվարությունը, գրեթե անլուծելիությունը.

Եվ անապատում մի քարի վրա
Միայնակ նստած մտածում էր նա...

Նոր Կտակարանում Քրիստոսի գործած բոլոր հրաշքները Քրիստոսի մասին ավելի քիչ բան են ասում, քան նրա խաչելությունը: Բոլոր այդ հրաշքները՝ մա-

հացածին հարություն տալը, երեք ձկով մի քանի հազար մարդ կերակրելը և այլն, ավելի շատ նպատակ ունեն մարդկանց ստիպել հավատալ, որ Քրիստոսն աստված է: Այս բոլոր հրաշքներում, ինչպես ասում են, նրա ծառայությունը մեծ չէ: Աստված է և այն էլ միակ աստվածը (Հոր և Սուրբ հոգու հետ միասին) և պետք է կարողանա աներևակայելի (մարդկանց համար) հրաշքներ գործել: Բայց խաչելությունը հոգևոր ուժերի անհնար լարում է պահանջում, և անշուշտ, Նոր Կտակարանի ամենաուժեղ հատվածները, իբրև գրական տեքստի, հենց խաչելությունը և նրան նախորդող գիշերվա նկարագրություններն են: Քրիստոսի մարդկային բնույթը տառապում է վերահաս տանջալից մահվան գիտակցությունից: Քրիստոսը խնդրում է հորից. «Այս բաժակը ինձնից հեռացրու»: Բայց Քրիստոսը նաև գիտի, որ ինքը պետք է ըմպի այդ բաժակը մինչև վերջ, պետք է տեսնի իր աշակերտների դավաճանությունը (Հուդան երեսուն արծաթի համար մատնում է նրան, իսկ Պետրոսը երեք անգամ հրաժարվում է նրանից), այսինքն՝ ապրի այն բոլոր տառապանքները, որ մի մարդ կարող էր ապրել այդպիսի հանգամանքների մեջ: Ի վերջո, Քրիստոսի բուն սխրագործությունը կատարվում է նախ նրա հոգում, ապա միայն խաչի վրա: Այստեղ էլ Քրիստոսը շատ տարբեր է Պրոմեթևսից, որը գործողության հերոս է, ինչպես բոլոր հին հունական հերոսները: Անհնար է Պրոմեթևսին պատկերացնել այն վիճակում, որով Թումանյանը իր բանաստեղծության մեջ ներկայացնում է Քրիստոսին՝ «Գլխակոր նստած, մտախոհ ու լուռ՝ Աշխարհի մասին մտածում էր նա»: Հոգու տառապանքները իբրև այդպիսիք այս հերոսների համար ամենևին ամենաբնորոշ գիծը չեն, ինչպես Քրիստոսի համար. դրանք անմիջապես վերածվում են գործողությունների կամ պաթետիկ խոսքի, որոնք իրենց հետևանքներով հավասար են գործողության: Քրիստոսի մեջ չկա այն ըմբոստությունը, որն այնքան գեղեցկացնում է Պրոմեթևսին և այնքան բնորոշ է նրան: Քրիստոսը գիտի իրեն սպասող տառապանքների մասին և խոնարհությամբ տանում է դրանք: Եվ եթե մեկն ուզում է գեղեցկություն տեսնել Քրիստոսի մեջ, պետք է կարողանա հասկանալ խոնարհության ու խոնարհի հաստատակամության գեղեցկությունը, որն անշուշտ շատ տարբեր է ըմբոստության ու խիզախության գեղեցկությունից: Փակագծերում ասենք, որ հայ գրականության մեջ հոգևոր գեղեցկության այս տիպը ամենից խորն արտացոլվել է Վահան Տերյանի և Ակսել Բակունցի գործերում:

Եվ այսպես, Պրոմեթևսն ու Քրիստոսը գնում են աներևակայելի տառապանքների հանուն մարդկանց: Բայց նրանք մարդուն միանգամայն տարբեր բաներ են տալիս: Ասացինք, որ Պրոմեթևսը տալիս է կրակը և կուլտուրայի բարիքները: Քրիստոսը տալիս է ... ի՞նչ, դժվար է պատասխանը ձևակերպել այնքան հստակ, ինչքան Պրոմեթևսի դեպքում: Փորձենք ասել՝ բարոյական կատարելության ծարավը: Մեծ բան է և մեծ բան չէ, կամ, ավելի ճիշտ, չշափելի մի բան չէ Պրոմեթևսի արածի հետ համեմատած: Մանավանդ Պրոմեթևսը կարող էր տեսնել իր օգնության արդյունքը՝ անշեղորեն զարգացող կուլտուրան՝ տեխնիկան, գիտությունը, կենցաղը և այլն և այլն: Քրիստոսը չէր կարող նման որևէ բան տեսնել: Ոչ միայն այն պատճառով, որ հոգում կատարվող գործընթացները տեսանելի չեն: Ի վերջո, Քրիստոսն աստված

էր և կարող էր տեսնել նաև հոգում կատարվածը: Ամբողջ խնդիրն այն էր, որ մարդկային հոգում շատ մեծ փոփոխություններ չէին կատարվում:

Սկսած այն պահից, երբ Պրոմեթևսը մարդկանց տվեց իր բարիքները, այդ ուղղությամբ մարդը հսկայական քայլերով առաջ է գնացել: Այսօրվա համակարգիչներն ու ողջ էլեկտրոնիկան Պրոմեթևսի տվածի զարգացումն են: Այնքան առաջ է գնացել, որ թվում է՝ առաջընթացի տեղ այլևս չկա, կամ հնարավոր նոր կատարելագործումներն արդեն վախեցնում են մարդկանց: Այնպես որ, իրավունք ունենք ասելու, որ Պրոմեթևսի ազնվական արարքը տվեց իր առատ արդյունքները, մարդկությունը ոչ միայն սովորեց պաշտպանվել բնությունից, գոյատևեց, կատարելագործեց իր կյանքն ու կենցաղը, այլև այնքան ուժեղացավ, որ սպառնալիք դարձավ բնությանը:

Քրիստոսի տվածի ուղղությամբ մարդկությունը շատ առաջ չի գնացել: Մարդկությունը գրեթե նույնքան խեղճ է իր հոգու արատների առջև, ինչքան Քրիստոսի ժամանակներում: Գիտական և տեխնիկական հզոր առաջընթացը այս իրողությունն ավելի է ընդգծում: Մարդիկ, այդ առաջընթացն օգտագործելով, ավելի ու ավելի մեծ կատաղությամբ են կոտորում իրար, ծաղկում են բարոյական արատներ, որոնք Քրիստոսի ժամանակներում ավելի զարգացած չէին: Ահա թե ինչու Թումանյանի Քրիստոսը այդքան մռայլ է (երևի կարելի էր ասել նաև՝ հուսախաբ, եթե նկատի չառնեինք Քրիստոսի Աստված լինելը):

Բայց այս իրողությունները բերում են պարադոքսալ (թվացող) եզրակացության: Քրիստոսի առջև կանգնած խնդիրը շատ ավելի մեծ էր և շատ ավելի դժվար, քան Պրոմեթևսի առջև կանգնած խնդիրը: Նյութական խնդիրները հեշտ էր լուծել, բարոյական և հոգևոր խնդիրները՝ շատ դժվար

Ի վերջո, կարելի է հետաքրքրական տրամաբանություն տեսնել նրանում, որ սկզբից մարդկությունը ծնեց Պրոմեթևսին, հետո՝ Քրիստոսին: Երբ մարդկությունը լուծեց բնության հետ իր հարաբերությունների խնդիրը և պինդ կանգնեց երկրի վրա, առաջացավ բարոյական կատարելագործման խնդիրը: Այնպես որ Քրիստոսի կերպարի ստեղծումը մարդկության առաջընթացի բարձրագույն արտահայտություններից մեկն էր: Բայց առաջընթացը այս ասպարեզում շատ ավելի դանդաղ եղավ, այնքան դանդաղ, որ կարող ենք մտածել նաև դրա բացակայության մասին: Ահա թե ինչու Պրոմեթևսի կերպարը, պահպանելով իր հմայքը, կորցրել է իր արդիականությունը: Նոր Պրոմեթևսը կարծես անելիք չունի այլևս: Բայց Քրիստոսի կերպարն այս իմաստով իր արդիականությունը չի կորցնում: Նրա առաքելությունը ավարտված չէ...